



Դրական վարքագծի գնահատումը և պլանավորումը դպրոցներում՝ տեղեկատվական թերթիկ

Հունիս 2015թ., Հրապարակում #CM60.10 Armenian

Ներածություն

Նահանգային և դաշնային օրենքները սահմանում են պահանջներ վարքագծի գնահատումներ իրականացնելու և ծառայություններ մատուցելու համար: Սույն տեղեկատվական թերթիկը տրամադրում է որոշ հիմնական տեղեկություններ այդ օրենքների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն ձեր երեխայի իրավունքների մասին առ այն, որ նա կարող է ստանալ դրական վարքագծի հետ կապված գնահատումներ, միջամտություններ և ծառայություններ: Սույն տեղեկատվական թերթիկը նաև տեղեկացնում է այն մասին, թե որտեղ կարելի է ստանալ շահերի և իրավունքների պաշտպանության օժանդակություն, եթե ունեք դրա կարիքը կամ եթե ունեք հարցեր օրենքի փոփոխությունների վերաբերյալ:¹

¹ 2013թ. հուլիսին Կալիֆոռնիայի օրենսդիր մարմինը, որպես իր բյուջետային գործընթացի մի մաս, չեղյալ համարեց Հյուզի օրենսդրական նախագծի մեծ մասը՝ օրենքների ու կանոնակարգերի մի խումբ, որը դպրոցական կրթության շրջանային բաժիններից պահանջում է ձեռնարկել հատուկ քայլեր՝ վարքագծային խնդիրներ ունեցող աշակերտների հատուկ կրթական կարիքները բավարարելու համար: Հյուզի օրենսդրական նախագիծը դպրոցական կրթության շրջանային բաժիններից պահանջում էր որոշակի իրավիճակներում ավտոմատ կերպով իրականացնել գործառնության վերլուծության գնահատումներ: Քանի որ այս գնահատումներն այլևս չեն պահանջվում ավտոմատ կերպով, ինչպես նկարագրված է նախորդ

Դաշնային և նահանգային գործող օրենքով դպրոցական կրթության շրջանային բաժինները ՊԵՏՔ Է տրամադրեն վարքագծին առնչվող համապատասխան ծառայություններ և օժանդակություն, այդ թվում՝ վարքագծի մանրամասն գործառության գնահատում և անհրաժեշտության դեպքում՝ դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտությունների պլաններ այն դեպքերում, երբ աշակերտն ունի այնպիսի վարք, որը խանգարում է այդ աշակերտի կամ մեկ այլ աշակերտի սովորելուն:

1. Կարո՞ղ է դպրոցական կրթության շրջանային բաժինը հրաժարվել իմ երեխային անհրաժեշտ վարքագծային ծառայությունները մատուցելուց

Եթե ձեր երեխան ունի այնպիսի վարքագիծ, որը խանգարում է ձեր երեխային կամ մեկ այլ երեխայի սովորելուն, դաշնային օրենքը պահանջում է՝ IEP թիմը ՊԵՏՔ Է որոշի, թե վարքագծային ինչպիսի օժանդակություն և ռազմավարություններ ու այլ ծառայություններ են անհրաժեշտ, որպեսզի ձեր երեխան կարողանա օգուտ ստանալ ուսումից ամենաքիչ սահմանափակումներով միջավայրում [34 C.F.R. Sec. 300.324(a)(2),(b)(2)]:

Դպրոցական կրթության շրջանային բաժինը պետք է տրամադրի գնահատման տեսակը, ծրագիրը, ծառայություններ կամ օժանդակում, որոնք ձեր երեխայի IEP-ի թիմը որոշում է, որ անհրաժեշտ են ձեր երեխային իր վարքագծի հարցում օգնություն ցույց տալու համար, որպեսզի ձեր երեխան կարողանա օգուտ քաղել ուսումից և ստիպված չլինի իր վարքագծի պատճառով տեղափոխվել առավել սահմանափակող միջավայր, օրինակ հատուկ դպրոց կամ ցերեկային ուղղիչ դպրոց:

Եթե ձեր երեխան ունի լուրջ վարքագծային խնդիրներ, օրինակ ագրեսիվ կամ ինքնավնասող վարք, ապա դպրոցական կրթության շրջանային բաժինը այլևս չպետք է ավտոմատ կերպով իրականացնի «գործառության վերլուծության գնահատում» կամ «դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության պլան», սակայն IEP-ի թիմը պետք է որոշի՝ արդյոք ձեր երեխան ունի

օրենքում, վարքագծի գնահատումները և դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտությունները դեռևս պահանջվում են որպես IEP-ի մաս և քննարկվում են սույն հրապարակման մեջ:

գործառույթային վերլուծության գնահատման կամ դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության պլանի կարիք, ինչպես նաև հաշվի առնի այլ ծառայություններ կամ ռազմավարություններ՝ նրա վարքագծային խնդիրները լուծելու համար: Եթե ձեր երեխան ունեցել է վարքագծի օժանդակման պլան, որը ձեր երեխայի խնդրահարույց վարքագծի ուղղման համար արդյունավետ չի եղել, դուք պետք է հայտնեք այս մասին IEP թիմին և պահանջեք, որ ձեր երեխան ստանա վարքագծի մանրամասն գործառույթային գնահատում, ինչպիսին է գործառույթային վերլուծության գնահատումը, որպեսզի IEP թիմն ունենա բավարար տեղեկատվություն դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության մանրամասն պլանը մշակելու համար:

Եթե ձեր երեխան ունի այնպիսի վարքագիծ, որը խանգարում է ձեր երեխայի կամ մեկ այլ երեխայի սովորելուն, IEP-ը պետք է ներառի հատուկ կրթության, վարքագծին առնչվող ծառայությունների և օժանդակ օգնության մասին հայտարարություն և այն ծառայությունները, որոնք պետք է մատուցվեն ձեր երեխային, ինչպես նաև հայտարարություն վարքագծի տարեկան չափելի նպատակների վերաբերյալ, որոնք նախատեսված են ձեր երեխայի վարքագծային խնդիրները լուծելու համար [34 C.F.R. Sec. 300.320(a)(2),(4)]: Եթե ձեր երեխայի IEP-ում ներառված չեն վարքագծային խնդիրները լուծելու ծառայություններ, օժանդակություն կամ ռազմավարություններ կամ չկան ձեր երեխայի վարքագծային խնդիրներին առնչվող նպատակներ, դուք պետք է նկատի ունենաք Կալիֆորնիայի Կրթության դեպարտամենտին օրենքի պահանջների պահպանման բողոք ներկայացնելու հանգամանքը: Եթե ձեր երեխայի IEP-ը պարունակում է վարքագծային խնդիրները լուծելու անարդյունավետ ծառայություններ, օժանդակումներ կամ ռազմավարություններ, դուք կարող եք ներկայացնել իրավական ընթացակարգի վերականգնման լուծումների պահանջ [տե՛ս Գլուխ 6, *Տեղեկատվություն իրավական ընթացակարգի և օրենքի պահանջների պահպանման բողոքների մասին*, Հատուկ կրթության իրավունքներ և պարտավորություններ <http://www.disabilityrightsca.org/pubs/504001Ch06>]:

2. Ի՞նչ պետք է ես անեմ, որպեսզի իմ երեխան ստանա անհրաժեշտ վարքագծային գնահատումը և ծառայությունները

Եթե ձեր երեխան ունի այնպիսի վարքագիծ, որը խանգարում է ձեր երեխայի սովորելուն կամ մեկ այլ երեխայի սովորելու ունակությանը, դուք պետք է պատրաստեք գրավոր դիմում IEP հանդիպման համար՝ որոշելու, թե ինչ օժանդակություն և ծառայություններ են անհրաժեշտ ձեր երեխային՝ նրա վարքագիծը դրական ուղղությամբ փոխելու համար: Ծառայությունները, որոնք IEP-ի թիմը պետք է հաշվի առնի, հետևյալն են. վարքագծի մանրամասն գործառնության գնահատում, վարքագծի ուղղման օժանդակող պլան և ըստ անհրաժեշտության դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության պլան, վարքագծային անձնական օգնություն, ծնողի և/կամ ուսուցչի վերապատրաստում և խորհրդատվություն վարքագծային մասնագետի հետ, խորհրդատվություն, հաղորդակցման հմտություններ, ինքնատիրապետում և/կամ այլ ծառայություններ ու ռազմավարություններ, որոնք ձեր կարծիքով անհրաժեշտ են ձեր երեխային:

Նախքան IEP հանդիպումը դուք կարող եք նաև ցանկանալ պատրաստել գրավոր դիմում վարքագծի գործառնության գնահատման իրականացման համար, հատկապես եթե դպրոցը մշակել է վարքագծի օժանդակման պլան կամ օգտագործել է վարքագծի ուղղման այլ ռազմավարություններ, որոնք չեն բարելավել ձեր երեխայի խնդրահարույց վարքը: Այս գնահատումը պետք է նախատեսված լինի ձեր երեխայի վարքի մասին մանրամասն տեղեկատվություն ստանալու համար (օրինակ վարքի մանրամասն նկարագրությունը, որքան հաճախ է դա պատահում, որքան է տևում, որտեղ է պատահում և ինչ է պատահում այն բանից առաջ և հետո, երբ ձեր երեխան դրսևորում է խնդրահարույց վարք), ինչպես նաև իմանալու ձեր երեխայի ուսումնական միջավայրի մասին, ինչը կօգնի IEP թիմին որոշել, թե ինչու է ձեր երեխան դրսևորում խնդրահարույց վարք և ինչ կարելի է անել ձեր երեխային օգնելու համար: Հատուկ կրթական ծրագրերի գրասենյակը (անգլերեն՝ Office of Special Education Programs - OSEP) վարքագծի գործառնության գնահատումները նկարագրել է որպես IDEA-ի «գնահատումներ»: Այդ պատճառով դուք պետք է խորհուրդ տաք դպրոցական կրթության շրջանային բաժնին, որ երբ դուք

պահանջում եք FBA, պետք է կիրառվեն բոլոր այն իրավական պահանջները, որոնք վերաբերում են այլ գնահատումներին:²

Գնահատման պլանը, որը ներառում է վարքագծի գործառնության զննահատումը, ձեր կողմից ստորագրվելու պահից դարձնում ունի 60 օր գնահատում իրականացնելու և մեկ այլ IEP հանդիպում անցկացնելու համար, որպեսզի քննարկվեն գնահատման արդյունքները և որոշվեն, թե ինչ ծառայությունների, օժանդակության և դրական վարքագծի այլ ռազմավարությունների կարիք ունի ձեր երեխան [Cal. Ed. Code Sec. 56344(a)]:

Եթե դպրոցական կրթության շրջանային բաժինն իրականացնում է ձեր երեխայի վարքագծի գործառնության զննահատում, սակայն դուք կարծում եք, որ գնահատումն օգտակար չէ ձեր երեխային անհրաժեշտ վարքագծային օժանդակման տեսակները կամ ծառայությունները որոշելու համար, կամ դուք համաձայն չեք դպրոցական կրթության շրջանային բաժնի գնահատման հետ այլ պատճառներով, մենք խորհուրդ ենք տալիս, որ դուք պահանջեք պետական ֆինանսավորմամբ իրականացվող անկախ կրթական գնահատում (անգլերեն՝ IEE) [34 C.F.R. Sec. 300.502; Cal. Ed. Code Sec. 56329(b)]:

Դուք պետք է այս դիմումը ներկայացնեք դպրոցական կրթության շրջանային բաժնին գրավոր և փորձեք բացատրել գնահատման այն յուրահատուկ մասերը կամ գնահատման իրականացման համար օգտագործված այն մեթոդները, որոնց հետ դուք համաձայն չեք: Եթե դուք պահանջում եք անկախ կրթական գնահատում, դպրոցական կրթության շրջանային բաժինը օրենքով պետք է համաձայնի վճարել այս գնահատման համար կամ ներկայացնի օրինական ընթացակարգի վերականգնման լուծման հայց՝ ցույց տալու համար, որ դպրոցական կրթության շրջանային բաժնի գնահատումը «օրինաչափ» է [34 C.F.R. Sec. 300.502; Cal. Ed. Code Sec. 56329(b):]

² OSEP-ի հուշագիրը, որը սակայն օրենքի պարտադիր պահանջ չէ, կարող է օգտագործվել՝ ստիպելու դպրոցական կրթության շրջանային բաժնին FBA-ի նկատմամբ կիրառել այն բոլոր ընթացակարգերը, որոնք կկիրառվեն մյուս բոլոր գնահատումների դեպքում: Այդ հուշագրի քննարկումը կարելի է գտնել առցանց՝ հետևյալ հղումով՝ <http://www.cde.ca.gov/sp/se/ac/biplefaq.asp>:

Այս տեղեկատվական թերթիկի վերջում մենք կներկայացնենք նմուշային նամակի ձև, որը կարող էք օգտագործել IEP պահանջելու համար, որպեսզի սահմանվեն ձեր երեխայի վարքագծին առնչվող կարիքները և/կամ վարքագծի գործառության գնահատում պահանջելու համար: Մենք նաև կցել ենք նմուշային նամակ անկախ կրթական գնահատում պահանջելու համար այն դեպքերում, երբ դուք համաձայն չեք դպրոցական կրթության շրջանային բաժնի կողմից իրականացված վարքագծի գործառության գնահատման հետ:

3. Ե՞րբ կարող է դպրոցական կրթության շրջանային բաժինը կիրառել վարքագծի արտակարգ ուղղիչ միջամտություն, օրինակ՝ զսպել կամ մեկուսացնել իմ երեխային

Կալիֆոռնիայի օրենքի այս հատվածը չի փոփոխվել: Դպրոցական կրթության շրջանային բաժինները կարող են կիրառել արտակարգ ուղղիչ միջամտություններ միայն դեպքերում, երբ՝

1. ձեր երեխան դրսևորում է անկանխատեսելի, կամայական վարքագիծ և
2. վարքը ներկայացնում է աշակերտին կամ ուրիշներին լուրջ ֆիզիկական վնաս պատճառելու վտանգ
և
3. վտանգավոր վարքը հնարավոր չէ անմիջապես կանխարգելել ավելի քիչ սահմանափակիչ գործողությամբ, քան արտակարգ ուղղիչ միջամտությունն է

[Cal. Ed. Code Sec. 56521.1(a)]:

Դպրոցական կրթության շրջանային բաժիններն արտակարգ ուղղիչ միջամտությունների կիրառումը երբեք չպետք է փոխարինեն դրական վարքագծի հասնելու համակարգային միջամտություններով [Cal. Ed. Code Sec. 56521.1(b):]

Դպրոցական կրթության շրջանային բաժիններին արգելվում է կիրառել այնպիսի միջամտությունների տեսակներ, որոնք վնասակար են աշակերտի առողջության կամ բարեկեցության համար, այդպիսիք են այն միջամտությունները, որոնք հավանական է ցավ պատճառեն, որոնք զրկում են

աշակերտին քնից, սննդից, ջրից, կացարանից, անկողնուց, ֆիզիկական հարմարավետությունից կամ սանհանգույցից օգտվելուց կամ որոնք հավանական է ձեր երեխային ենթարկեն բառային վիրավորանքի, ծաղրանքի, նվաստացման կամ որոնք ակնկալվում է, որ ձեր երեխային կպատճառեն լուրջ հոգեկան տրավմա [Cal. Ed. Code Sec. 56521.1(d)]:

Դպրոցը կարող է կիրառել արտակարգ ուղղիչ միջամտություն, ինչպիսին ձեր երեխայի ֆիզիկական զսպումն է, միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է վտանգավոր վարքը վերահսկելու համար, և կարող է կիրառել ուժ միայն այն չափով, որը ողջամիտ է և անհրաժեշտ է հանգամանքների բերումով [Cal. Ed. Code Sec. 56521.1(b),(c)]:

Եթե դուք կարծում եք, որ ձեր երեխայի դպրոցը ձեր երեխայի նկատմամբ կիրառում է միջամտությունների արգելված տեսակներից որևէ մեկը կամ ձեր երեխայի նկատմամբ անընդհատ կիրառում է զսպում կամ մեկուսացում կամ այլ տիպի միջամտություն, օրինակ կանչում է ոստիկանություն առանց ձեր երեխային դրական վարքագծի հասնելու անհատականացված օժանդակություն ցուցաբերելու, դուք պետք է կապվեք հատուկ կրթության իրավապաշտպանի կամ փաստաբանի հետ:

4. Ի՞նչ իրավունքներ ունենք ես և իմ երեխան, եթե Դպրոցական կրթության շրջանային բաժինը կիրառում է այնպիսի արտակարգ ուղղիչ միջամտություն, ինչպիսին օրինակ իմ երեխայի ֆիզիկական զսպումն է

Եթե դպրոցը ձեր երեխայի նկատմամբ կիրառում է արտակարգ ուղղիչ միջամտություններ, դպրոցական կրթության շրջանային բաժինները պետք է տեղեկացնեն ձեզ այդ մասին մեկ ուսումնական օրվա ընթացքում [Cal. Ed. Code Sec. 56521.1(e)]:

Դպրոցական կրթության շրջանային բաժինը պետք է կազմի նաև արտակարգ վարքագծի մասին հաշվետվություն, որում պետք է ներառի տեղեկատվություն այն դեպքերի մասին, որոնք հանգեցրել են վարքագծի արտակարգ ուղղիչ միջամտության կիրառմանը և տեղեկատվություն միջամտության կիրառման մասին և կցի դա ձեր երեխայի գործին [Cal. Ed. Code Sec. 56521.1(e)]: Շրջանային

բաժնից չի պահանջվում տալ ձեզ այս հաշվետվության պատճեն, եթե դուք չպահանջեք այն: Մենք խորհուրդ ենք տալիս գրավոր դիմում ներկայացնել այս հաշվետվությունը պահանջելու համար, եթե լսել եք, որ ձեր երեխայի նկատմամբ կիրառվել է վարքագծի արտակարգ ուղղիչ միջամտություն:

Եթե ձեր երեխան չունի վարքագծի ուղղիչ միջամտության պլան, ապա դպրոցական կրթության շրջանային բաժինը արտակարգ ուղղիչ միջամտությունը կիրառելուց հետո երկու օրվա ընթացքում պետք է նշանակի IEP հանդիպում՝ որոշելու արդյոք անհրաժեշտ է վարքագծի գործառնության գնահատում և որոշելու արդյոք ձեր երեխան ունի վարքագծի արտակարգ դեպքերի պլանի կարիք, քանի դեռ իրականացվում է գնահատումը [Cal. Ed. Code sec. 56521.1(g)]:

Եթե ձեր երեխան արդեն ունի դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության պլան, շրջանային բաժինը պետք է նշանակի IEP հանդիպում՝ այդ պլանը վերանայելու և հավանաբար փոփոխելու համար, եթե դպրոցը ձեր երեխայի նկատմամբ կիրառել է վարքագծի արտակարգ ուղղիչ միջամտություն, քանի որ ձեր երեխան դրսևորել է այնպիսի վարք, որն ընդգրկված չէ պլանում, կամ ձեր երեխայի պլանն արդյունավետ չի եղել վարքագծային խնդիրները լուծելու համար [Cal. Ed. Code sec. 56521.1(h)]:

Եթե ձեզ տեղեկացրել են, որ ձեր երեխայի դպրոցը ձեր երեխայի նկատմամբ կիրառել է վարքագծի այնպիսի արտակարգ ուղղիչ միջամտություն, ինչպիսին զսպումն է կամ մեկուսացումը, դուք պետք է հիշեցնեք դպրոցական կրթության շրջանային բաժնին IEP հանդիպում նշանակելու իրենց պարտավորության մասին, որպեսզի ձեր երեխայի համար մշակվի վարքագծի օժանդակման նոր կամ փոփոխված պլան: Եթե դպրոցական կրթության շրջանային բաժինը չի անում դա, մենք խորհուրդ ենք տալիս ներկայացնել օրենքի պահանջների պահպանման բողոք:

5. Ուրիշ որտե՞ղ կարող եմ փնտրել ուղղորդում այս հարցի վերաբերյալ

Կալիֆոռնիայի Կրթության դեպարտամենտը (անգլերեն՝ California Department of Education - CDE) հրապարակել է հարցերի ու պատասխանների մանրամասն

փաստաթուղթ, որը ներկայացնում է տեղական կրթական գործակալությունների (անգլերեն՝ local educational agency - LEA) պահանջները վարքագծի գնահատումներ իրականացնելու և ծառայություններ մատուցելու վերաբերյալ: Հարցերի ու պատասխանների ձևն առկա է առցանց՝ հետևյալ հղումով:

<http://www.cde.ca.gov/sp/se/ac/bipleafaq.asp>

Այդ տեղեկատվական թերթիկը քննարկում է OSEP-ի այն հուշագիրը, որը վարքագծային գնահատումները նկարագրում է որպես IDEA-ի գնահատումներ, ինչպես քննարկվել է վերևում՝ 2-րդ կետում:

6. Ո՞րտեղ կարող եմ օգնություն ստանալ, եթե ունենամ դրա կարիքը

Եթե ունեք հարցեր օրենքի այս փոփոխության վերաբերյալ կամ ընկել եք որևէ այլ խնդիրների մեջ կապված դպրոցում ձեր երեխայի դրսևորած վարքի հետ, խորհրդի համար զանգահարեք Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությանը 1-800-776-5746 հեռախոսահամարով: Կալիֆորնիայի Վարչական գործերով լսումների գրասենյակն ունի նաև անվճար կամ ցածր գներով աշխատող փաստաբանների ցուցակ, ովքեր կարող են օգնել ծնողներին: Այդ ցուցակի կրկնօրինակը պահանջելու համար կարող եք զանգահարել նրանց (916) 263-0550 հեռախոսահամարով կամ եթե ունեք համացանցի մուտք, կրկնօրինակը կարող եք ներբեռնել առցանց՝ հետևյալ հղումով:

<http://www.documents.dgs.ca.gov/oah/SE/SE%20advocacy%20list.pdf>

Լրացուցիչ ռեսուրսներ՝

Նմուշային նամակներ

Նմուշային նամակ վարքագծի գործառնության գնահատում և IEP հանդիպում պահանջելու համար

Ծնող՝
Հասցե՝

Հեռախոսահամար՝

Ամսաթիվ՝

Հատուկ կրթության գծով տնօրենին

Միացյալ դպրոցական կրթության տեղական բաժին

Հասցե՝

Թեմա՝ Երեխայի անուն

Հարգելի հատուկ կրթության գծով տնօրեն,

Մենք ստացել ենք մեր երեխայի գնահատումը, որն իրականացվել է շրջանային բաժնի անձնակազմի կողմից [մուտքագրել գնահատման ամսաթիվը] ամսաթվին: Մենք համաձայն չենք այս գնահատման հետ, քանի որ այն չի ներառում մեր երեխայի վարքագծի համապատասխան գործառույթային գնահատումը: Քանի որ մենք կարծում ենք, որ ներկայիս գնահատումը ցույց չի տալիս մեր երեխայի վարքագծային խնդիրների ճշգրիտ պատկերը, այդ թվում՝ մեր երեխայի վարքագծի գործառույթը և միջավայրային գործոնները, որոնք կարող են նպաստել այդ վարքագծի դրսևորմանը, մենք պահանջում ենք վարքագծի անկախ գործառույթային գնահատում պետության ֆինանսավորմամբ՝ համաձայն 34 CFR օրենքի բաժին 300. 502.-ի:

Մենք նաև համաձայն չենք գնահատման հետ, քանի որ.

[մուտքագրեք գնահատման հետ ձեր անհամաձայնության պատճառները՝ ներառյալ հետևյալ հայտարարություններից մեկը կամ մի քանիսը, եթե կիրառելի են]

Դիտարկումները, հարցազրույցները և այլ տվյալները, որոնց վրա հիմնված է գնահատումը, բավարար չափով բազմակողմանի չեն, որպեսզի սահմանեն իմ երեխայի վարքագծի գործառույթը կամ նպատակը և լուծեն իմ երեխայի բոլոր վարքագծային խնդիրները:

Գնահատումը չի ներառում իմ երեխայի խնդրահարույց վարքագծի և/կամ իմ երեխայի դրական այլընտրանքային վարքագծի նախադեպերի վերլուծությունը (անգամ եթե պատահել են անմիջապես դրանից առաջ) և հետևանքները (դեպքեր, որոնք պատահել են վարքագծի արդյունքում) և այդ պատճառով IEP

Թիմին չեն օգնում իմ երեխայի համար դրական վարքագծի հասնելու ուղղիչ միջամտության պլանի մշակման կամ փոփոխման հարցում:

Գնահատումը չի իրականացվել այնպիսի անձնակազմի կողմից, ով վերապատրաստված է կամ փորձառու է վարքագծի գործառութային գնահատում իրականացնելու համար:

Դաշնային կանոնակարգերը պահանջում են, որ դուք արձագանքեք այս դիմումին «առանց անհարկի հապաղման»՝ հաստատելով, որ դուք իմ երեխայի համար կձեռնարկեք անկախ կրթական գնահատում պետական ֆինանսավորմամբ կամ կներկայացնեք իրավական ընթացակարգի պահպանման բողոքի հայց՝ լսումներ պահանջելու համար և ապացուցելու, որ ձեր գործառութային վերլուծության գնահատումը ճիշտ է (34 CFR section 300.502(b)):

Ակնկալում ենք աշխատել ձեզ հետ համագործակցային սկզբունքներով՝ համաձայնության գալու որակավորում ունեցող անկախ գնահատողի հարցում և սկսելու առաջ տանել վարքագծի անկախ գործառութային գնահատումը գնահատման դաշնային և նահանգային պահանջներին համաձայն:

Խնդրում ենք պատասխանել այս դիմումին որքան հնարավոր է շուտ:

Հարգանքով,

Ծնող

Նմուշային նամակ Դպրոցական կրթության շրջանային բաժնին պետական ֆինանսավորմամբ վարքագծի անկախ գործառնության գնահատում իրականացնելու պահանջով

Ծնող՝
Հասցե՝
Հեռախոսահամար՝
Ես նաև պահանջում եմ
Ամսաթիվ՝

Հատուկ կրթության գծով տնօրենին
Միացյալ դպրոցական կրթության տեղական բաժին
Հասցե՝

Թեմա՝ Երեխայի անուն

Հարգելի հատուկ կրթության գծով տնօրեն,

Ես գրում եմ Ձեզ իմ երեխայի վարքագծի գործառնության գնահատման համար: Իմ երեխան ունի այնպիսի վարքագիծ, որոնք խանգարում են նրան սովորել և զրկում են այլ երեխաներին սովորելու ունակությունից: Բացի այդ, վարքագծի օժանդակման պլանը և միջամտության ռազմավարությունները, որոնք ներկայումս ներառված են իմ երեխայի IEP-ում, անարդյունավետ են եղել այդ վարքագիծն ուղղելու համար:

Ես ակնկալում եմ ստանալ գնահատման պլան 15 օրվա ընթացքում: Ես հասկանում եմ, որ ձեզնից պահանջվում է իմ կողմից գնահատման պլանն ստորագրելուց հետո 15 օրվա ընթացքում իրականացնել վարքագծի գործառնության գնահատում և անցկացնել IEP հանդիպում գնահատումը քննարկելու համար: Խնդրում եմ տրամադրել ինձ գնահատման հաշվետվությունների պատճենները IEP հանդիպումից մեկ շաբաթ առաջ, որպեսզի ես ողջամիտ կերպով մասնակցեմ այդ հանդիպմանը:

[Լրացուցիչ՝ Ես նաև պահանջում եմ, որ որքան հնարավոր է շուտ նշանակվի IEP հանդիպում՝ որոշելու, թե վարքագծի ինչ օժանդակում կարող է տրամադրվել իմ երեխային, քանի դեռ իրականացվում է վարքագծի գործառնության գնահատումը: Ես հասկանում եմ, որ ձեզնից պահանջվում է

նշանակել IEP հանդիպումը այս դիմումի ամսաթվից ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում]:

Հարգանքով,

Ծնող

Մենք ուզում ենք լսել Ձեր կարծիքը: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք լրացնել այս կարճ հարցումը և մեզ տրամադրել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>:

Կալիֆորնիայի Հոգեկան առողջության ծառայությունների մարմինը (անգլերեն՝ California Mental Health Services Authority - CalMHSA) վարչաշրջանային կառավարման մարմնի կազմակերպություն է, որն աշխատում է անհատների, ընտանիքների և համայնքների հոգեկան առողջության արդյունքների բարելավման ուղղությամբ: CalMHSA-ի կողմից իրականացվող կանխարգելիչ և վաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորվում են վարչաշրջանների կողմից քվեարկությամբ հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքի միջոցով (Օրենսդրական նախագիծ 63): Օրենսդրական նախագիծ 63-ը տրամադրում է ֆինանսավորում և շրջանակ, որն անհրաժեշտ է ընդլայնելու հոգեկան առողջության ծառայությունները նախկինում թերի ապահովված և Կալիֆորնիայի տարբեր համայնքների ողջ բնակչության համար:



WELLNESS • RECOVERY • RESILIENCE

